

338.98

9-73

10 FEB 2010



ԱՇԽԱՏԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

Ա.ՐՓԻԿ ԶՈԼԱ.ԽՅԱՆ

ԳԵՂՋՎՈՒՅԻ,
ՊԱՅՔԱՐԻՐ ԳՅՈՒՂԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ



ՊԵՏՐՈՎ 1931 ՅԵՐԵՎԱՆ
• AM. A. ՀԵՐԵՎԱՆ / ՀԵՐԵՎԱՆ
• 1572-52

ԳԵՂՋԱԿՈՒՀԻՐ, ՊԱՅՔԱՐԻՆԻ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՄԱՆ ՀԱՄԱՐ

Ծնորչիլ կուսակցության ճիշտ քաղաքավականության և կոլտնտեսական, խորհանութեական, չքավոր ու միջակ աշխատավոր գյուղացիական լայն մասսաների հերուական աշխատանքների, հիմնականում հաջողությամբ ավարտվեց բայլշելիկյան յերկրորդ գարնանացանը և բերքահավաքը:

Այժմ մեր առաջդրված և վո'չ պակաս կարելոր, քաղաքական և տնտեսական խոշոր նշանակություն ունեցող ինդիք՝ դա աշնան գյուղատնտեսական կամպանիան է, զորին ձևանարկել և մեր կուսակցությունը: Բայլշելիկյան յերկրորդ գարնանացանի և բերքահավաքի ընթացքում քանակազես և վորտկազես աճել, ամրացել են կոլտնտեսությունները: Յեթև 1930 թ. գեկտեմբերին՝ ամբողջ Հայստանում կոլեկտիվացված եր 20.100 չքավոր ու միջակ տնտեսություն, վորը կազմում եր ամբողջ գյուղացիական տնտեսությունների 12,5 տոկոսը, այժմ ըստ կոլտնտեկնարունի տվյալների, առ 20ն սեպտեմբերի 31 թ. կոլեկտիվացված և 53665 չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների թիվը աճել եւ ավելի քան յերկու անգամ: Սակայն չնայած պահն

կոլեկտիվացման տեմպը մեզ մոտ Հայստանում շատ ավելի ցածր է և հետ և մնում վոչ միայն Խորհրդային Թուսառտանից, այլ և Անդրկովկասի մյուտ հանրապետություններից:

Հայստանի կոմկուսի կենտկոմի հուլիսյան պլենումը քննության առնելով այս ինդիքը, արձանագրեց, վոր կոլեկտիվացման տեմպի անբավարար լինելու պատճառը, մանավանդ անասնապահական շրջաններում, հանդիսանում է անցյալ տարվա համատարածի շրջանում թույլատրած սխալները՝ կամավորական սկրդունքի խախտումը, միջակին աչքաթող անելը, և հետագայում այդ սխալների ուղղումը աջ պրակտիկայով փոխարինելը:

Փոխանակ անողոք պայքար մղելու և վճռաբար սւրբելու թույլատրած բոլոր «ձևի» քայլադյոզությունները ու բայլչեիկորեն կազմակերպելու նոր հոսանք գեպի կոլտնտեսությունները, մի շարք կուսկաղմակերպություններ և կոլտնտեսություններ հետ կանգնեցին տյդ աշխատանքներից, ինքնահով մատնելով այն: Եեղակի չեն նաև դեպքերը, յերբ շատ շրջաններում արհեստական արգելակներ ստեղծեցին կոլտնտեսություններում չքավոր և միջակ տնտեսությունների ներդրավման դեմ, զորն ի հարկի, իր հերթին խանդարեց կոլեկտիվացման ծավալմանը:

Գետք ե արձանադրել, վոր կենտկոմի պլենումից հետո տեղական կազմակերպություններն այդ տեսակեցից բեկում մտցրին աշխատանքներում, վորի հետեւ վանքով կոլեկտիվացման տեմպը զգալի չափով արագացավ: Այդպես, որինակ, Դամարլի շրջանում, պլենութի ժամանակ, կոլեկտիվացման տոկոսը հասնում էր 38 տոկոսի, իսկ ներկայումս աճել ու հասել է 81,5 տո-

Պոսի, Ղուրդուղուլիում 57,3 տոկոս եր, այժմ 78,2 տոկոս, Դիլիջանում 18,7 տոկոս եր, այժմ 23,5 տոկոս և այլն:

Այժմ մեր առաջ խնդիր ե դրված ամրապնդել այդ առաջարկում ունեցած մեր նվաճումները և գլխավորել չքավոր-միջակ տնտեսությունների հոսանքը դեպի կուտնտեսությունները:

Այժմ, յերբ մեր արդյունաբերությունը բուռն վերելքով առաջ ե զնում, յերբ մեր աշխատավոր մասսաների խանդավառ աշխատանքների չնորհիվ նորհըդային Միությունը հաջողությամբ ավարտում և սոցիալիզմի հիմքի կառուցումը և թեքակոխում և սոցիալիզմի չըջանը, յերբ նորհըդային Միության պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը 5-ամյակի Յերրորդ, վճռական տարվա հանրագումարները տալով, շուտով անցնելու յեն 4-րդ, յեղափակման տարվա աշխատանքներին, հրատապ խնդիր ե կանդնում մեր առաջ ել ավելի ուժեղացնել հարձակումը գյուղի սոցիալիստական վերակառուցման ֆրոնտում և ամրացնել կադակերպչուն ու տնտեսակես գյուղատնաեսության սոցիալիստական սեկտորը:

Աշնանացանի հաջող անցկացումը պետք ե խրանի անդիսանա և ապահովի գյուղի սոցիալիստական վերակառուցման նոր վերելքը: Ավելին. այս տարի աշնանացանի կամալանիան պետք ե նախասղայմաններ ստեղծի վճռական շրջադարձ կատարելու կոլտնտեսական շարժման ծավալման և ամրապնդման գործում, վարպետի իրագործվի կուսակցության մարտական դիրեկտուր՝ կոլեկտիվացումը հիմնականում ավարտել բամբակացան շրջաններում 32 քվին, իսկ մյուս շրջաններում 32-33 քվերին և համատարածի հիման վրա կուտակությունը վերացնել վորպես դասակարգ:

Սորհուբանների համարիութենական Յ-րդ համագու-ժարն առանձնապես կանգ առնելով կոլտնտաշարժման և կուլտնտշինարարության խնդիրների վրա, հետեւյալ կերպ դրեց չքավոր ու միջակի առաջ կոլտնտեսություն ժանելու հարցը՝

«Հիմա, յերբ չքավորների և միջակների բազմամի-լին մասսաները համոզվելով կոլխոզի տվյալ առաջե-լուր-յունների մեջ, կուեկտիվացման ուղին են բնուում, խոկ կուլակուր-յունը՝ կոլխոզների գլխավոր ու հիմնա-կան քշամին՝ վերացվում և վորսիս դառակարգ, ամեն մի մենատնտես չքավորի ու միջակի առաջ, վորը դեռ չի մտել կոլխոզ, հիմնական հարց ե բարձրանում՝ վելիողի հետ, քե՞զ կոլխոզի դեմ»:

Մի այլ տեղ համագումարի բանաձեւվում ասված ե՝ «Բանվարագյուղացիական իշխանության համար այսուհետ հիմնական և գլխավոր հենարանը զյուգում ենուիւթեւում և կոլխոզային գյուղացիությունը»:

Անցուշտ, այսպիս զնելով խնդիրը, վոչ մի գեղ-ջում չի նշանակում վոր մենք այս կամ այն չափով խախտում ենք կոլտնտեսություն մտնելու կամավորա-կան ոկզբունքը: Միալ կլիներ այդպես մեկնարանել համագումարի այս վորոշումները: Կոլտնտեսություն մտնելու կամավորական սկզբունքը միշտ ել յեղել և մենում և վորպես հիմնական լինինյան սկզբունք:

Մեր առաջ խնդիր ե դրված՝ խորհուրդների հա-մամիութենական Յ-րդ համագումարի վորոշումների և կոլտնտաշարժման առաջակցում մեր ձեռք բերած նվա-ռումների հիման վրա, բացատրել զեռևս կոլտնտեսու-թյուն շմառած չքավոր ու միջակ մենատնտեսատեր գյուղացիությանը խոշոր, կոլեկտիվացված տնտեսու-թյան առավելությունը՝ մանր, ցիր ու ցան յեղած տըն-

ՄԵՂ մօտ Հայաստանում ժողկոմիսորհի վորոշմամբ
այս աշնանը ցանվելու յն 115-170 հեկտար տարածություն, անցյալ տարվա 93-157 հեկտարի դիմաց, այսինքն այս տարի աշնանացանի տարածությունն աճելու յն 22.6 տոկոս: Բայց գյուղացիական հասալածների վերոհիշյալը բաժանված է հետևյալ կերպով՝ խորհածված տեսություններին՝ 1520 հեկտար, կոլտնտեսություններին՝ 50-170 հեկտար և անհատական տնտեսություններին՝ 63480 հեկտար: Բացի դրանից դարձանացանի համար աշնանավար պետք եւ արդի 160 հազար հեկտար հող, վորից բամբակի համար 33 հազար հեկտար, ծխախոռի համար 3500 հեկտար, չաքարի հակնդեղի համար 2800 հեկտար, այլ տեխնիկական մշակույթների համար 5000 հեկտ., ցանովի խոտերի համար 20.000 հեկտար, արմատակալուկների համար 3000 հեկտար, ոիլուսային բույսերի համար 10.000 հեկտար, այլ մշակույթների համար 14000 հեկտար և դարձանացանի մշակույթների համար 68,700 հեկտար:

Աշնանացանի ժամկետները վորոշված են՝ լեռնային շրջաններում ցանքը պետք եւ վերջանա միջև սեռակերի 25-ը, նախալեռնային շրջաններում մինչև հոկտեմբերի 20-ը, գաշտավայրերում մինչև նոյեմբերի 10-ը:

Կարո՞ղ ենք մենք արդյոք իրադորձել կուսակցության տված այս մարտական դիրքետիմիները՝ աշնանացանի պլանների կատարման և նրա հիմքում՝ դրված գյուղի կոլեկտիվացման արագ և բարձր տեմպի դործում:

Մրա պատասխանը միայն և միայն պետք եւ լինի՝ Այսուհետեւ այսուհետեւ անենիք: Էստոնիական կուսակցությունը տանելով ճիշտ լենինյան քաղաքականություն, պայքարելով դասակարգային թշնամության համար:

ամեն տեսակի ու դույնի, աջ և «ձախ» ոպորտունիութերի դեմ, կարողացալ գյուղական մասսաներին՝ չքավորությանը և միջակներին թեքել դեպի գյուղի սոցիալականացման, խոչը կոլեկտիվացման տնտեսությունների ուղին: Գարնանացանի և բներքահավաքի հաջող ալարտումը և պլանների գերակատարութը չախճախիչ հարված տվեց աջերի բարբաչանքներին՝ ֆեր պլանների ուղղրած և անիրազործելի լինելու մասին և ել ավելի ուժեղացրեց ու նոր նոսանք ստեղծեց դեպի կոլտնտեսությունները: Այժմ ևս մեր կուսակցությունը պետք եւ բայց կերպուն կազմակերպի և զվարության կամպանիայի աշխատանքները, չթուլացներով պայքարը դասակարգային թշնամության կուլականության տարրերի և նրանց ազենտուրայի դեմ մեր կուսակցության ներսում, աջ և «ձախ» ոպորտունիութերի և դեպի այդ թեքումները հայտաբերված հաշտվողականության դեմ, հակահարված տալով նրանց ամեն մի փորձին՝ խանգարելու աշխանացանի պլանների կատարեան գործին:

Աշնանացանի հաջող ավարտումը, դարձանացանի և բներքահավաքի ընթացքում ձեռք բերած հաջողությունների հետ միասին, պետք եւ վճռական շրջադարձ ստեղծեն ամբողջ գյուղական աշխատավորական մասսաներին դեպի գյուղի սոցվերակառուցման ուղին, դեպի համատարած կոլեկտիվացում դարձնելու դործում, վորի հիման վրա պետք եւ վերացվի կազմակերպմի վերջին մնացորդները գյուղում՝ կուլակությունը վորպես գասակարդ:

53 ՀԱԶԱՐ ՀԵԿՏԱՐ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Կուսակցության 16-րդ համադրումարը վորոշեց առնը արդյունաբերության հետ զուգընթացարար ավելի

ևո զարկ տալ թեթև արդյունաբերությանը—այսինքն
մանուֆակտուրայի, շաքարի, սապոնի, լուցկու և այլն
սպառողական ապրանքների արտադրությանը։ Թեթև
արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը հան-
գիսանում և տեքստիլ արդյունաբերությունը։ Տեքստիլ
արդյունաբերության զարդացման համար անհրաժեշտ
ե հում նյութ, գլխավորապես բամբակ։ Մենք զիտէնք,
վոր բամբակը մշակում են մեր կոլտնտեսությունները,
նորհանուստեսությունները և անհատ գյուղացիական
անտեսությունները։ Ակներեւ ե վոր ինչքան մեր կոլ-
տնտեսականը, գյուղացին շատ ցանի և հավաքի բամ-
բակ՝ արդյունաբերության հանձնելու համար, այն-
քան ել բանվորը գործարանում շատ մանուֆակտուրու-
թիթ, կտավ կարտաղը գյուղացու համար։ Այս հիմնա-
կանը, գյուղի և քաղաքի կասիի բնակավառում յերբեք
չպետք ե մոռանա վոչ մի կորտնտեսական ու կոլտնտե-
սուհի, գյուղացի և գեղջկուհի։

Հակոռակ դասակարգային թշնամու տմեն տեսակ
գավերին և աջ ոսկորառնիստների բարբաջանքներին,
բայլշեկիյան յերկրորդ գարնանացանի ընթացքում կա-
տարգեց և գերակատարվեց բամբակացանի պլանը։
Պլանով նախատեսված 25 հազար հեկտարի դիմաց ցան-
գեց 26 հազար հեկտար բամբակ։ Այժմ բամբակի ցանք-
առաջտերի ընդարձակման խնդիրն ավելի քան խաչոր
քաղաքական և տնտեսական նշանակությանը ունի։ Կու-
տակության առաջ մարտական ինդիք և կանգնած՝ անց
նել ովելի բարձր տեմպերի, գալիք դարնանացանին
ցանել 53 հազար հեկտար բամբակ-այսինքն կրկնա-
պատկել այս տարրվա պլանը։

Այս տարրվա աշնանացանի կամպանիան խոշոր նշա-
նակություն պետք է ունենա բամբակի այս մարտական

պլանի կատարման գործում, այն իմաստով, վոր հոգը
վարվի, պատրաստվի, արաթ արվի գորնանացանի հա-
մար։

Աշնան գյուղատնտեսական կամպանիայի պլանի
համաձայն, բամբակի գարնանացանի համար այժմ
պետք է վարվի 33 հազար հեկտար հող, վորից ձմեռային
արաթ պետք է արվի 15 հազար հեկտար։ Պետք է թույլ
չտալ վոր կրկնվեն անցյալ տարվա սիսաները, յերբ ա-
վելացել եր աշնանացանի հացահատիկների ցանքը,
վոչ ի հաշիվ նոր վարված հողերի, այլ ի հաշիվ բամ-
բակի տարածության։ Հայտառանում կիմառան բամ-
բակացան շրջաններն են՝ Ղուրդուղաւու, Ղամարվի,
Վեդիի և Վաղարշապատի լուսանները։ Պետք է վճռական
պայտքար մղել և չթույլատրել վոր այս շրջաններում ու-
ղիւ կուլտուրաներ ցանկեն, բացի այն հողերից, վո-
րոնք ըրլորովին անպետք են բամբակի համար։

Փամանսկին ավարտելով բամբակի աշխանավարք,
կանենալով համապատասխան պայմաններ և հապա-
նովենք բամբակի 53 հազար և լուրոար գարնանացանը,
վորը ամենալավ զբաղվականը կրկնի հաջողությամբ
առնելու պայքարը բամբակի սնկախության համար։

ՊԼԵՔԱՐԵՆՔ «ՈՒԿՐԱԽՆԿԱՅԻ» ՀԱՄԱՐ

Աշնանացանի ընդհանուր տարածության լայնաց-
ման հետ, մեր առաջ մարտական խնդիր և դրված՝
բարձրացնել աշնանացան հացահատիկների բերքատվու-
թյունը։ Տեղական ցորենը վատ վորակ և քիչ արդյուն-
ավետ, անհրաժեշտ և փոխարինել այն տեսակավոր
հացահատիկներով։ Բատ ժողկոմխորհի վորոշման, այս
տարի հայտառանում պետք է ավելացվի տեսակավոր
ցանքսերի, գլխավորապես «ուկրախնկայի» տարածու-

Թրունը: Անցյալ տարվա 6.378 հեկտարի դիմաց, այս
տարի պետք է ցանվի 34,017 հեկտար, վորք
ըստ գյուղացիական հատվածների բաժանված և հետե-
յալ կերպով՝ խորհանուեսություններին՝ 1500 հեկտար,
կոլտնտեսություններին՝ 14,240 հեկտար, անհատական
տնտեսություններին 18.277 հեկտար: Վորպեսզի մենք
ի վիճակի լինենք իրադրութել նախատեսված պլանը,
անհրաժեշտ և այժմյանից հավաքել և ապահովել սեր-
մացույի համապատասխան քանակը: Այս տարվա «ուկ-
րաինկայից» ստացած ամբողջ բերքը պետք է հատկաց-
վի աշնանացանի համար, կարճ ժամանակամիջոցով
ստեղծվեն անձնություններ: Բերքից ստացված
տեսակավոր սերմերի ընդհանուր Փոնդը սահմանված է
48.000 ցենտներ, պետական Փոնդը 1400 ցենտներ և ներ
մուծման կարգով ստացված սերմացույի քանակը 8.500
ցենտներ: Բացի այդ, համաձայն Հողդողկոմատի վո-
րոշման, Հիմնական հացահատիկային շրջաններին՝ Ալ-
տա, Աղբարտ, Բասարգեչար, Կոտայք, Մարտունի, Ար-
թիկ, Ն. Բայցաղետ և Դիլիջան-աչքի առաջ ունենալով
վոր հիշյալ շրջաններն այս տարվա բերքով չեն կարող
ապահովել պլանով նույնատեսված ցանքերը տեսակա-
վոր սերմացույի, բայց և թողնելելու 23 հազար ցենտո-
ներ տեսակավոր սերմացու: Տեղերում պետք է պայ-
քարել տեսակավոր սերմացուն սպառողական կարիքնե-
րին հատկացնելու դեմ:

Ժամանակին հավաքելով աշնանացանի ամբողջ
սերմացուն և ստեղծելով անձնունմինի սերմֆոնդեր՝
կապահովենք «ուկրաինկայից» համար նախատեսված
տարածությունը սերմացույով, վորով կլուծենք այս
տարվա աշնանացանի մարտական խնդիրը՝ տեղական
ցորենը «ուկրաինկայով» փոխարինելը:

12

ԱՊԱՀՈՎԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ ԿԵՐՈՎ,

Անասնաբուծության սոցիալիստական հիմքերով
կազմակերպումն ու զարգացումն այժմ մեր կուսակցու-
թյան համար խոչըն քաղաքական և տնտեսական խըն-
դիր է: Այդ առթիվ ընկ ընկ. Մոլոտովի և Ստալինի
հայտնի գիմումն սոցիալիստական անասնաբուծության
զարգացման մասին հետևյալ կերպ և դնում հարցը:—
«Գյուղատնտեսության ասպարիգում մոտակա ժամա-
նակներում մեր կենտրոնական խնդիրն և անասնաբու-
ծության սոցիալիստական հատվածը—խորիսնետեսու-
թյուններ և կոլտնտեսական ապրանքային գերմաներ
ստեղծելու և ամրացնելու աշխատանքը: 1931 և 1932
թվականներին անասնաբուծության ծավալման առավա-
րեցում պետք է լինեն նայենակի վնասական բնիման տա-
րիներ, ինչպիսին ելին 1929 և 1930 թվականներն սա-
ցիալիստական հացահատիկային տնտեսության կազ-
մակերպման բնագավառում»:

Այս տարի միայն Հայաստանում կազմակերպվելու
յև 35 անասնաբուծական՝ կաթնամթերային ֆերմա-
ներ, վորոնք պետք է ունենան 10500 խոչըն և մանր
յեղջյուրավոր անասուններ: Բացի այդ, այս տարի
անասունների թիվը Հայաստանում պետք է աճի հետե-
վյալ կերպ՝ ձիերի թիվը պետք է հասնի 54 հազարի,
այսինքն պետք է աճի 15 տոկոս, խոչըն անասունների
թիվը պետք է հասնի 874,300 զիլի, կամ աճի 7 տոկոս:—
Խողերի թիվը պետք է հասնի 31,500-ի, այսինքն աճի
100 տոկոս:

Սոցիալիստական անասնաբուծության զարգացման

Հիմնական նախագայմաններից մեկը կերի խնդիրն է : Կարգավորելով կերի խնդիրը, կապահովենք նրա զարգացումը : Այս տեսանկյունից մոտենալով խնդիրն, աշնան գյուղատնտեսական կամպանիան պետք է վճռական նշանակություն ունենա կերի բաղայի ուժեղացման խնդրում : Այս իսկ նպատակով, այս տարի աշնանացանի պլանով ավելացել են նաև ցանովի խոտերի տարածությունը : Համաձայն պլանի՝ միայն խորհունակություններում աշնանը պետք է ցանովի 2,170 հեկտար խոտ : Բացի այդ, աշնանավարի ընդհանուր տարածությունից հատկացված ե 20 հազար հեկտար ցանովի խոտերի և 10 հազար հեկտար սիլոսային բույսերի համար :

Կատարելով աշնանացանի կամպանիայի պլանով մեր առաջ դրված այս խնդիրները, կառահովենք Համականկումի և Ժողկոմի դիմումի կարձամանակում կենսագործումը, այս ե՞ւ

«1931 թվականին պետք է ամուր հիմք զցել անապահության սոցիալիստական հատվածի հետագա արագ զարգացման համար, վորպեսզի զյուդատնեսության արտադրության առաջնորդությունը դիմումը դիմումի կամանակում կենսագործումը, այս ե՞ւ

ԱԳՐՈ — ԿՈՒԼՏՈՒՐ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Աշնանացանի ընդհանուր տարածության լոյնացման հետ, մեր առաջ մի կարելով խնդիր է դրված՝ բարձրացնել բերքատվությունը : Դրա համար անհրաժեշտ է ձեռնարկությունը միջոցառումները : Ինչպես միշտ, այնպես ել այս

վելու հողերը պետք է պարարտացվեն . դա բերքատվության բարձրացման հիմնական պայմաններից մեկն է : Պարարտացումը կատարվում է զանազան քիմիական պարարտանյութերի միջոցով : Բայց վորովհետեւ մենք դեռ հնարավորություն չունենք բոլոր հողերն ապահովել պարարտանյութերով, պետք է ոգտագործել գոմերի կենդանիների աղբը, թոնիբների մոխիրը, վորոնք նույն պես շատ լավ պարարտացնում են հողը : Այս տարի աշնանացանի ամբողջ սերմացուն պետք է 100 տոկոս զույթի և 70 տոկոս ախտահանովի : Պետք է հետեւի, վորպեսողի վոչ մի հատիկ ցորեն առանց զտելու հող չոցվի : Բացի այդ, չպետք է թույլատրել, վորպեսզի զարնանացանի սերմացուն առանց զտելու հողերը լցնեն : Աշնանացանի ընթացքում 60 հազար հեկտար պետք շարքացան արգի, վոր կազմում է ցանքի ամբողջ տարածության 52 տոկոսը, իսկ տեսակալոր սերմերը 100 տոկ. պետք է շարքացան արվեն : Մեծ դեր ունի կատարելու վնասառուների գեմ պայքարող ակցիոներական ընկերությունը (ԱԲԳ) : Նա պետք է ձեռնարկի զանազան միջոցների պայքարելու համար ցանքսերի լնաստուների գեմ, ստեղծի միջոցներ մրիկով վարակած շրջանների սերմացուն 100 տոկոս ախտահանելու համար և այն : Սերմացուն զտման ու ախտահանման աշխատանքները պետք է այնպես կազմակերպվեն, վոր համապատասխանեն ցանքի ռահմանված ժամկետներին :

Միայն կերառելով վերոհիշյալ ադրոկուլտուր ձեռնարկումները՝ կապահովենք բերքատվության բարձրացումը :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԱՐՈԴՈՒ-
ՄԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ե

Աշնանացանի և աշնանավարի պլանները հաջողու-
թյամբ ավարտելու համար անհրաժեշտ ե ապահովել
չքանի ու գյուղերը գյուղատնտեսական մեքենանե-
րով՝ գութաններով, շարքացաններով, տրիերներով և
այլն։ Հողդռողկոմատի դժով նախատեսված ե գյուղե-
րին տալ մեկ ու կես միլիոն ո. գյուղատնտեսական զա-
նազան մեքենաներ։ Բայց չպետք ե միայն հույս դնել
դրա վրա։ Պետք է կարգի գցել, նորոգել և ողտադր-
ծել կոլտնտեսությունների և խորհանտեսությունների
շրջադատնտեսական ինվենտարը։ Մեքենաարակտորա-
յին կայանները պետք ե շտապ կարգով նորոգեն և առա-
հովեն տրակտորները նավթով և լապտերներով, վոր-
պեսդի սկսեն բամբակի աշնանավարը։ Վորպեսդի տրակ-
տորներն աշխատեն համաձայն աշնանացանի պլաննե-
րի, մեքենաարակտորային կայանները պետք ե կազմեն
երենց պլանները, տալով յուրաքանչյուր տրակտորին
որական 20 ժամվա աշխատանքային բեռնվածություն։
Լայն ուշադրություն պետք ե զարգվի նաև տրիերնե-
րի, շարքացանների և այլ մեքենաների նորոգման վրա։
Յուրաքանչյուր տրիեր ամբողջ սեղոնում պետք ե գտի
600 ցենտներից վոչ պակաս սերմացու։

ՊԱՅՔԱՐԻ ՀԱՆԵՆՔ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍ-
ՍԱՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒՀԻՒ,
ԳՅՂԶԿՈՒՀԻՒ, ՅԵՂԻՐ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻԲՔԵՐՈՒԽՄ


Աշնանացանի մարտական պլանները ժամանակին ե
տել իրագործելու համար անհրաժեշտ ե մորիեղտ-
ությաի յենթարկել գյուղի վողջ աշխատավորական
և կոլտնտեսական մասսաներին, նրանց կազմա-

կերպել, պայքարի հանել կուտակցության տուաջաղբած
պլանների կատարման համար։ Դրա համար անհրաժեշտ ե
առաջին հերթին լայնորեն մասսայականացնել աշնանա-
ցանի կամպանիայի պլանները, հասցնելով այն լրջան-
ներին, գյուղերին, կոլտնտեսություններին, խորհանա-
սություններին, մեքենա-տրակտորային կայաններին,
անհատ չքավոր ու միջակ տնտեսություններին, յուրա-
քանչյուր կոլտնտեսականի և կոլտնտեսուհու, գյու-
ղացու և գեղջկուհու։ Անհրաժեշտ ե կոլտնտեսություն-
ների ընդհանուր ժողովներում, գյուղի հասարակական
ժողովներում, արտադրական ժողովներում, կոլտնտե-
սուհիների, գեղջկուհիների ընդհանուր ժողովներում,
պատժողովներում, կին-ակտիվի ըրջանային խորհրդակ-
ցություններում և հավաքներում մանրամասն քննու-
թյան առնել գյուղին, կոլտնտեսությանը տված պլան-
ները, վորպեսդի յուրաքանչյուր կոլտնտեսական և կոլ-
տնտեսուհի, գյուղացի և գեղջկուհի իմանա թե ինքն
այս աշնան գյուղատնտեսական կամպանիայի ընթաց-
քում ինչքա՞ն և ի՞նչ պետք ե վարի ու ցանի։

Կոլտնտեսուհիները, չքավոր ու միջակ գեղջկու-
հիները մեծ անելիքներ ունեն աշխատացածի կամպա-
նիայի աշխատանեներում։ Պետք է նրանց մորիեղտայի-
տի յենթարկել, համախմբել կուտակցության շուրջը, կաղ
ժակերպել նրանց աշխատանքը՝ պայքարի հանելով նը-
րանց աշխատացանի պլանների կատարման և կերակա-
տարման համար։

Մեր մեծ ուսուցիչ լենինը առել ե — ընդկրտային
քյունակության սկսած գործը առաջ կգնա միայն այն
ժամանակ, յերբ նուսաստանում այդ գործին կմասնակ-
ցնեն միլիոնավոր կամայք։

Բօլոր աշխատանքներուն կամպանիաներում



գնուք և զեկավարվել Լենինի այս օրատիպաժով։ Միայն
լոյնորեն մասնակից դարձնելով աշխատավոր էնոլլ
ոց։ Հնարաբության բոլոր բնադրավառներին՝ կապո-
հովենք սոցիալիզմի լիակատար հաղթանակը մեր յերե-
քում։

Անցյալ տարի, դարնանացանի ընթացքում՝ թուր-
լատրոծ մի շարք սխալների հետ միասին մեր կուսկագ-
մակերպությունները տեղերում չկարողացան զվասկո-
րել և լավ հունի մեջ դնել գեղջկուհների մասսայի առ-
ճող ակտիվությունը, ողտադործելով այն գյուղի սոց-
վերակառուցման համար։ Իսկ այդ շատ ճարպիկորեն
սպառագործեց դասակարգային թշնամին, տարածելով
զանազան պրովոկացիաներ կոլտնտշինարարության
մասին, կարողացավ իր աղղեցության տակ գցել
գեղջկուհների ավելի հետամնաց մասսաներին։

Այս տարի մենք տեսնում ենք հակառակը։ Դարնա-
նացանի կամպանիան, հացամթերումները, պատժողով-
ների և խորհուրդների վերընտրություններն ապացու-
ցում են, վեր գեղջկուհների լայն մասսաներն ավելի
քան ակտիվացել են, փոր նրանք դալիս են կուսակցու-
թյան նշած ուղիով։

Կոնկրետ ի՞նչ աշխատանքներ կարող են պետք և
տանեն կոլտնտեսուհները, գեղջկուհները և պատժո-
ղովները աշնանացանի ընթացքում։ Բայց եվիկյան յերկ
բարդ դարնանացանի և բերքահավաքի ընթացքում կոլ-
տնտեսուհների և գեղջկուհների բրիգադները մեծ
աշխատանք տարան դաշտերը և վարելահողերը քարե-
րեց մաքրելու, դաշտերը պարարտացնելու գործում,
և բարձրագուման, քաղհանի, բերքահավաքի ընդհանուր աշ-
խատանքներում և այլն։ Այժմ նրանք նույնպես
յանազ և ինայեն իրենց ուժերը և պետք և

ըսլըշեմիկորեն լծվեն՝ աշնանացանի աշխա-
տանքներին։ Անհրաժեշտ և կոլտնտեսուհնե-
րի ընդհանուր ժողովներում, պատղամավորական ժո-
ղովներում քննության առնելով աշնանացանի պլանե-
րը, մշակել գեղջկուհների կոնկրետ անելիքները, կադ-
մակերպել սերմը դաշելու, ախտահանելու, դաշտերը քա-
րերից մաքրելու, գյուղատնտեսական մեքենաները հաշ-
վեառնելու և նորոգելու կոլտնտեսուհների հարվա-
ծային բրիգադներ՝ առաջ քաշելով հին, փորձված,
ընդհանուրի հարդանքը վայելող կոլտնտեսուհնե-
րից բրիգադիրներ։ Գեղջկուհները խոշոր անելիքներ
առնեն նաև բերքի բարձրացման գործում։ Դրա հա-
մար անհրաժեշտ և վորպեսի նրանք ծանոթ լի-
նեն ազրոձեռնարկումների հետ, քննության առ-
նեն նախատեսված ազրումնիմումը պատժողովնե-
րում և մշակեն գեղջկուհների կոնկրետ անելիք-
ներն այդ ասպարիզում։ Որինակ կոլտնտեսուհները
և գեղջկուհները կարող են կազմակերպել վնասատու-
ների դեմ պայքարող, արտերը պարարտացնող, աղբը
դաշտերը անդախովող բրիգադներ։ Աղբումինմումի
մշակման աշխատանքներում կոլտնտեսուհուն և գեղջ-
կուհուն պետք և ողնության գան շրջանային և գյուղա-
կան ազրոնումները։ Կոլտնտեսուհները և գեղջկուհն-
երը սրանց զեկավարությամբ կարող են լավ պար-
քարել բերքատվության բարձրացման համար։ Գեղջկու-
հները և պատժողովները պետք և կոլտնտեսություն-
ներին ողնեն նաև սերմֆոնդերի հավաքման գործում,
հայտաբերեն կուլակների կողմից սերմը թալզնելու
դեպքեր, պայքարեն սերմացուն սպառողական կարիք-
ների համար ողտագործելու դեմ և այլն։

Վորպեսի ժամանակին ավարտվեն աշնանացանի

աշխատանքները, կոլտնտեսուհիների բրիգադները
պետք ե փոխաղարձ ողնություն կազմակերպեն, բուք-
սիրի վերցնեն անհատ չքավոր ու միջակ տնտեսու-
թյուններին, այրի գեղջկուհիներին, հետ մնացող գյու-
ղերին, կոլտնտեսություններին և շրջաններին:

Գեղջկուհիների ընդհանուր ժողովներում մանրա-
մասն քննության առնելով և բացատրելով աշնանացանք
առաջ դրված խնդիրները, պետք ե աշխատել նոր հո-
անք ստեղծել գեղջի կոլտնտեսությունները: Այդ գոր-
ծում կուսակցությանը պետք ե ողնության գան մեր
գյուղական աղատամավորական ժողովները, չե՞ վոր
նրանք այս ողակներն են, վորոնք աշխատավոր կանանց
լայն մասսաները կապում են կուսակցության հետ, անց
են կացնում կուսակցության գիծը: Այս բանը պետք ե
լրակ իմանա ամեն մի պատգամավորուհի, ամեն մի
ակտիվ կոլտնտեսուհի:

Այդ առթիվ Համկոմկուսի կենտկոմն ունի իր հա-
ժամանակակից վորոշումը, վորտեղ ասլած ե —

«Պատժողովները թե՛ քաղաքում և թե՛ զյուղում
պետք ե լինեն այնպիսի լծակ—հարվածային բրիգադ,
վորի ոգնությամբ և կուսակցության ղեկավարու-
թյամբ շարժման մեջ դրվեն բանվորութինների, կոլտըն-
տեսուհիների և աշխատավոր կանանց լայն մասսա-
ները»:

Պետք ե ակտիվ պատգամավորուհիներից և կոլ-
տնտեսուհիներից կազմակերպել բրիգադներ, կարմիք
ինամախոսներ, վորոնք զանազան զրույցների միջոցով
պետք ե բացատրեն գեռես կոլտնտեսություն չմտած
չքավոր-միջակ գեղջկուհիներին կոլեկտիվացված տնտե-
սությունների առավելությունները՝ անհատականի հան-
գեկ, բերեն փաստեր իրենց անտեսության նվաճաւմ-

ներից, կոլտնտեսականների նյութական և կուլտուրա-
կան դրության բարելավումից և այլն: Նման բացատրա-
կան աշխատանքները և զյույցները գործնականութ-
է կամողեն գեղջկուհուն կոլտնտեսություն մտնելու ան-
համարժեշտության վերաբերմար, վորպես միակ հանա-
պահը՝ բարելավելու իր տնտեսական և կուլտուրական
դրությունը և կատեղծնն նոր շարժում դեպի կոլտնտե-
սությունները:

Աղդային փոքրամասնությունների շրջաններում,
ուր կոլեկտիվացման տեմպն ավելի ցածր ե, պետք ե
ավելի ևս ուժեղ աշխատանք տանել գեղջկուհիների
մեջ, մշակել աշխատանքի առանձնահատուկ ձևեր:
Գյուղերում, ուր աղդաբնակչությունը խառն ե, որի-
նակ՝ կազմված և հայերից և թուրքերից, պետք ե կազ-
մակերպել խառը բրիգադներ: Բացի այլ, անհրաժեշտ
և փոխաղարձ ողնություն կազմակերպել հայկական,
թուրքական, ուրսական զյուղերի կոլտնտեսությունների
միջև, բուժություն վերցնելով հետ մնացողներին:

Քաղաքի բանվորուհիների պատժողովները նույն-
պես մեծ անելիքներ ունեն աշնանացանի աշխատանքնե-
րում: Նրանք պետք ե իրենց ժողովներում քննության
առնեն աշնանացանի պլանները, կազմակերպեն նույնպես
հարվածային բրիգադներ և բուժություն վերցնեն իրենց
յենթաշեֆ գյուղերը: Բանվորուհիների բրիգադները կա-
րող են շարաթորյակների միջոցով դաշտերը մաքրել քա-
րերից, սերմացուն զտել, ախտահանել և այլն:

Բացի այդ, քաղաքի պատժողովները կարող են
նյութական ողնություն կաղմանկերպել իրենց յենթաշեֆ
գյուղերին՝ զնելով իրենց միջոցներով զյուղատեսա-
կան զանազան մեքենաներ այլն:

Պետք ե արձանագրել, վոր մինչեվ այժմ ել շատ

կալտնեսուրյուններում նկատվում է կոլտնտեսութիւնների, գեղջկուհինների աշխատանքի թիրապիտակառութերանց ցածր վորակի աշխատանքն է արվում։ Պետք է անողոքաբար պայքարել հայտաբերված նման ամեն մի փաստի դեմ, վորսկելով այդպիսին վորակեա աջ ոպրուունիզմ՝ պրակտիկայում։ Պետք է ասել այլիլին—գարզանացանի և բերքահավաքի բնիքացում յեզակի չելքել դեպքեր, յերբ կոլտնտեսուրյուններում նույնանման աշխատանքների համար կինը և տղամարդը զանան աշխատավարձ—աշխորեր են ստացել։ Պետք է վճռական պայքար մղել լենինյան դժի նման աղավազումների դեմ, հայտաբերելով ամեն մի կոնկրետ գեղք և պատասխանատվության յննթարկել մեզագործներին։

Միաւեսակ աշխատանքին միաւեսակ վարձառարություն, տասեց մեռի խորության, ոտ յե մեր կուսակցության գիծը։

ԱՄՐԱՑՆԵՆՔ ԳՈՐԾԱՐՔԸ—ՍՈՅՄՐՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐՈՒԹՅՈՒՆ

Աշնանացանի հաջող ավարտումը խոչոր չափուկախաված և նրանից, թե ի՞նչպես մեր կուսակցական և խորհրդային կազմակերպությունները կզիմավորեն և կընկալավարեն այդ աշխատանքները, ինչպէս կկազմակերպի աշխատանքը կոլտնտեսություններում։

Աշխատանքի սոցիալիստական ձեմքեր՝ սոցմբցումը և հարվածայնությունը, վորը մեծ արդյունք և ավել մեր բոլոր աշխատանքների բնագավառներում, պետք լայնորին գործադրել և աշնանացանի աշխատանքներում Պետք է կազմակերպել լայն սոցմբցում և հարվածայնություն, շրջանների, գյուղերի, բրիգադների, առանձին կոլտնտեսականների և կոլտնտեսականների, գյուղա-

շինների և գեղջկուհինների մեջ։ Պատգամավորական ժողովները նույնական պետք ե կազմեն հարվածային բրիգադներ, վորոնց մասնակից պետք ե դարձնեն վոչ պատգամավորուհին՝ չքավոր ու միջակ գեղջկուհիններին։ Պատգովովների բրիգադների միջել պետք ե անցկացնել լայն սոցմբցում և հարվածայնություն։ Պետք է կիրառել շաբաթորյակների ձեր—դաշտերը ջարերելու, սերմը զտելու և այլ աշխատանքների համար։

Գեղջկուհինների բրիգադները պետք ե պարբերաբ հաշվետու լինեն պատգամավորուհինների, կունանակութիւնների և գեղջկուհինների ընդհանուր ժողովներում, իրենց տարած աշխատանքների համար։

Կանանց բրիգադներին, առանձին կոլտնտեսութիւններին ու գեղջկուհիններին քաջալերելու և խրախուսելու համար, պետք ե կազմակերպել հատուկ ֆոնդեր, նըւանցից լավագույններին պարզեվատրելու համար։

Յուրաքանչյուր բրիգադին և ողակին պետք ե տաղի բրենց պլանները, ամբաջնելով վորոշ հողամասի և ինքնառարի, նրանց պատասխանատու դարձնելով աշխատանքների համար մինչեւ աշնանացանի վերջը։ Այսպիսով հնարավոր կլինի վերացնել դիմագորուրկ աշխատանքը և անպատճանատվությունը։ Աշնանացանի ընթացքում պետք ե ավելի և ամբաջնել դործարքը կոլտնտեսություններում։ Կորոնտեսությունների աշխատանքը փորձը ցույց ե տվել վոր աշխատանքի դործավարձային սիօտեմի կիրառումը խոչոր չափով նպաստում և աշխատանքի արտադրողականության բարձրացման, բարձրացնում և յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքային ննտուցիալմը, առաջ և բերում նրա մեջ շահագովածություն։

Պետք և պայքարել աշխորերի հավասար բաշխման գեմ բրիգադի, ողակի անդամների միջն, վորը նկատվում և մեր մի շարք կոլտնտեսություններում : Ի՞նչպես կարելի յել լոդրին, սիմուլյանտին, ծույլին տալ նույնքան աշխատավարձ, նրա գրքույկում դրանցել նույնքան աշխարեր, ինչ վոր հարվածային, լավ աշխատող կոլտնտեսականի գրքույկում : Այս պրակտիկան վոչ մի առնչություն չունի մեր կոլտնտեսության քաղաքականության հետ : Խորհուրդների չամամիութենական 6-րդ համագումարը կոլտնտշնարարության ինդիքների շուրջը իր վորոշումների մեջ, ասում ե —

«Ով շատ և լավ և աշխատում, նա յել շատ և ըստանում, իսկ ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում» :

Այս հիմնական թեղը, վորը պետք և աղդակ հանդիսանա կոլտնտեսությունների ամրացմանը և տնտեսական բարդալաճմանը, յերբեք չպետք և մոռանա վոչ Տի կոլտնտեսական և կոլտնտեսուհի : Կոլտնտեսություններն կոլտնտեսականի գրքույկում աշխորերի գըրանցման ժամանակ անշեղորեն պետք և զեկավարվեն Խորհուրդների համագումարի այս վորոշումներով :

ԾԱՎԱԼԵՆՔ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԱՆԵՐԸ

Վորպետի հնարավոր լինի կոլտնտեսուհիների, չքալոր ու միջակ գեղջկուհիների լայն մասսաներին մոռիլիցիայի յենթարկել և մաքսիմալ չափերով մասնակից անել աշնանացանի աշխատանքներին, անհրաժեշտ և առաջին հերթին ապահովել նրա կենցաղային դրությունը, ազտակը նրան տնային հոգսերից, ստեղծել պայմաններ՝ վորպետի յերեխաներ ունեցող կոլտնտեսուհիները, գեղջկուհիները դաշտ գնալով չմտածեն

տան, յերեխաների մասին, հավատացած լինելով, վոր նրանք ապահով տեղ են և ինամող ունեն : Սրա համար անհրաժեշտ և առաջին հերթին ծավալել մոռըների, մանկհրապարակների ցանցը : Այդ աշխատանքներում մեծ անելիքներ ունեն հենց իրենք կոլտնտեսուհիները և գեղջկուհիները : Զպետք և յերբեք սպասել թե վերևից կզան և կկազմակերպեն մսուր, մանկհրապարակ : Կոլտնտեսուհիները, գեղջկուհիները իրենք պետք և նախաձեռնեն այդ գործը :

Կոլտնտեսուհիների, գեղջկուհիների, պատղամալորուհիների ընդհանուր ժողովներում պետք և քննության առնել մօռւրի, մանկհրապարակ կազմակերպելու խողիրը : Գետք և ընտրել ակտիվ գեղջկուհիներից մերիցադա, վորը պետք և տանի կազմակերպչական աշխատանքները, կատվի կոլտնտեսության վարչության, համագումարախան ցրջանային և կենտրոնական մարմինների հետ և այլն : Լենինն այդ առթիվ ասել ե —

«Մենք ստեղծում ենք որինակելի հիմնարկություններ, հաշարաններ, մսուրներ, լվացքատներ, վորոնք ազատելու յեն կենոր տնային տնտեսությունից : Բանվորուհիները և գեղջկուհիները իրենք պետք և կազմակերպեն այդ հիմնարկությունները» :

Կոլտնտեսությունները և նրանց վարչությունները պետք և իրենք նույնպես շահագրգումած զդան այս կենցաղային հիմնարկների կազմակերպման գործում, աշակցեն, նյութական ողնություն ցույց տան, շենք հատկացնեն, ստեղծեն համապատասխան պայմաններ՝ մըսուրի, մանկհրապարակի կազմակերպման համար : Բայց պետք և արձանագրել, վոր մի շարք կոլտնտեսությունների մատների արանքով են նայում այս խնդրի վրա : Նման վերաբերմունքը միանդամայն անթալլատ-

թելի յէ տնտեսական և կուլտուրական վերելքի ներկա շրջանում, յերբ մեր գյուղատնտեսության զարգացումը նորանոր աշխատող ձեռքեր և պահանջում, յերբ կոլտնտեսուհու և գեղջկուհու կուլտուրական պահանջները աճել են: Գետք ե անողոք կերպով պայքարել կենցաղային հիմնարկների կաղմակերպման դործը ինքնահոսի թողնելու ամեն մի փաստի դեմ, վորակելով այդ վերպես աջ ոպրոտունիդմ:

Գարնանացանի և բերքահավաքի ընթացքում համապատասխան մարմինների կողմից կաղմակերպվել են 220 շարժական և սովորական բաց մոռւրներ, վորից 100-ը բամբակացան շրջաններում: Յուրաքանչյուր մը սուրը ընդգրկել ե միջին թվով 30 յերեխա: Աշխատել են նաև 750 ամառային մանկական հրատարակներ: Գետք և արձանագրել վոր չնայած մի շարք թերությունների՝ ղեկավարների բացակայության, սննդի պակասության, սանիտարական անօիթար պայմանների, այնուամենայնիվ դարնանացանի և բերքահավաքի ընթացքում այս կենցաղային հիմնարկները մեծ դեր խաղացին կոլտնտեսուհիների և գեղջկուհիների լայն ժամանակի աշխատանքի կաղմակերպման և ողտադրժան դործում:

Այժմ, աշնանացանի ընթացքում, վոչ մի դեպքում չպետք ե թույլատրել, վորպեսդի դոյսություն ունեցող 220 մոռւրներ և 750 մանկաբարպարակները պահանջվեն: Ընդհակառակը՝ պետք ե աշխատել ավելացնելն ըստ քանակի: Կոլտնտեսուհու գծում կողմակերպել 12 մոռւր՝ բամբակացան շրջաններում: Գետք ե բարելավել դոյսություն ունեցող մոռւրների և մանկաբարպարակների դրությունը, ապահովել ղեկավարներով և լավացնել անողի դործը: Առժազկո-

ւառի մոր և մանկան պաշտպանության բաժինը կուտակեսությունների մոռւրների ղեկավարներ վերապատճառություններու համար կաղմակերպել ե բամբակացան շրջաններում 10-15 որվա կուրս-կոնֆերանսներ, վորտեղ կերպատրաստվել են մոռւրի ղեկավար կոլտնտեսուհիները, և այժմ աշխատում են վորպես մոռւրի ղեկավարներ:

Գետք և կաղմակերպել ե լավ հիմքերի վրա ղեկանե անողի գործը կոլտնտեսություններում: Կաղմակերպել դաշտում կողմեկանիվ, ընդհանուր ձաշ: Այդ աշխատանքների կաղմակերպումը պետք ե իրենց վրա գերցնեն պատղամալյուրուհիները և կոլտնտեսականները: Զե՞ վոր նրանք մեծ փորձ ունեն այդ ասպարեզում:

Աշխատանքի, մոր և մանկան պաշտպանության դործը, վորը մեծ ծավալ և ստացել ամբողջ նորհրդային Միության մեջ, ղեկավարների գյուղը: Կոլտնտեսուհին մինչև Հղիության վերջին որը կատարում ե զաշտային աշխատանք, վորի հետեւանքով լեզակի չեն գելքեր, յերբ ժամանակից չուտ ծննդաբերություններ, Վիժուալներ են լինում, գեղջկուհին հիվանդանում ե և այլն: Անհրաժեշտ ե գեղջկուհիների համար ստեղծել համապատասխան պայմաններ, վորպեսդի չխախտվեն նրա մայրության Փունկցիաները, վորպեսդի նրանք գյուղատնտեսական աշխատանքների հետ զուգընթացառք ի վիճակի լինեն առաջ յերկրին նոր, առողջ սերունդ:

Գետք և, ինչպես քաղաքում բանվորուհիները՝ այնպես ել գյուղում կոլտնտեսուհիները հղիության շրջանի վերջին ամիսներում աշխատանքից ազատվեն: բայց միայն աշխատանքից աղատելը բավական չե: Գետք և շրջան բավարարել աշխատավարձով, այլապես նըսնքակավոծ կլինիկ գնալ աշխատանքի:

Այժմ այդ հարցը ավելի քան անհետաձգելի խնդիր և դարձել, քանի վոր ներկայումս կոլխողներում յեկա ժուտը բաշխվում է վոչ թե ըստ չնչի, այլ ըստ աշխատանքի :

Առժողղոմատի մոր և մանկան պաշտպանության բաժինը կոլտնտկենտրոնի հետ այդ առթիվ վորոշում ունեն՝ աղատել կոլտնտեսուհիներին հղության շրջանում և հետո դաշտային աշխատանքներից 3 ամիս, սահ մանելով սրանց համար աշխատավարձ, հաշվածներով վերջին յերեք ամսվա աշխորերի չափով:

Վերջերս թե՛ ժողկոմխորհը և թե՛ Հայաստանի նենտկոմը վորոշում ունեն կոլտնտեսություններին կից կազմակերպելու փոխադարձ ողնության դրամարկղներ, վորի նպատակն ե ողնություն ցույց տալ ժամանակավորապես անաշխատունակ կոլտնտեսության անդամներին (հիվանդներին, հղի կանանց և այլն): Անշուշտ նման դրամարկղների ծավալումը հնարավորություն կտա իրադրությունը Առժողղոմատի և կոլտնտկենտրոնի վորոշումը՝ մայրության և մանկության պաշտպանության գործում:

Տեղերում պատգամավորական ժողովները պետք ե հետեւեն ու ոժանդակեն, վորպեսզի կոլտնտվարչությունները կյանքում կիրառեն այս վորոշումը և ծառ վալեն կոլխողներին կից խնայդրտամարկղների կազմակերպման գործը:

Կուլտ-կենցաղային հիմնարկների ծավալումը հնարավորություն կտա կոլտնտեսուհիներին, չքավոր ու ժիջակ գեղջկուհիներին 100 տոկոսով՝ լծվելու աշնանացանի և գյուղի սոցվերակառուցման աշխատանքներին,

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ
ԱՌԱՋ ՔԱՇՈՒՄԸ

Կադրերի խնդիրն այժմ մեր կուսակցության համար կարեվոր խնդիր է: Ապահովել մեր կոլտնտեսությունները վորակավոր աշխատաօղներով, կնշանակի բարձրացնել մեր աշխատանքների վորակը, նրա արտադրողականությունը, ամրացնել կոլտնտեսությունները տնտեսակես և կազմակերպչութեն: Այս ակտակետից յելնելով, Հողժողկոմատի կադրերի բաժինը գարնանացանի և բերքահավաքի ընթացքում կազմակերպել ե մի շարք կարճատեմի և 6-ամսյա կուրսեր: Բայց պետք ե արձանագրել, վոր չնայած նրան, վոր տեղերին հրահանգված ե յեղել այդ կուրսերում առնվազը 30% ընդգրկել կանանց—վոչ մի կին չի յեղել այդ կուրսերում: Դրա գիխավոր պատճառը կենցաղային պայմաններն են: Այժմ Հողժողկոմատը վորոշում ունի հոկտեմբերի 1-ից տեղերում—դյուտերում կազմակերպելու մասսայական կուրսեր, վորտեղ պետք ե վերապարտութեն 12000 գյուղացիք և գեղջկուհիներ: Այդ կուրսերում պետք ե պատրաստվեն՝ զոոլիազորներ, վետ-լիազորներ, թրունակահներ, ավագ և կրտսեր տավարապահներ, Հորթարածներ, գինեցործներ, կթողներ և այլն:

Պետք ե հետեւել, վորպեսզի այդ դասընթացներում կոլտնտեսուհիների, գեղջկուհիների տոկոսը ապահովված լինի: Այդ միանդամայն հնարավոր ե, վորովհետեւ այդ կուրսերը կազմակերպվելու յեն անմիջապես գյուղերում, կոլտնտեսություններում, վորտեղ գեղջկուհիները կարող են լայնորեն մասնակցել, կենցաղային պայմանները նրանց չեն խանդարի:

Կոլտնտկենտրոնի գծով գարնանացանի ընթացքում

շրջաններում կաղմածկերպված կուրսերում գեղջկաւելի-
ների թիվը նույնակա շատ ցածր է յեղել—ընդամենը
2½% : Բամբակի մշակման, քաղցանի կազմակերպման
ընթացքում գոյություն ունեցող կուրսերում զեղջկու-
հների տոկ. հասել եր 26,1%-ի : Այժմ կոլտնտելենարո-
նը շրջաններում կաղմակերպում երիդադիրների, բնր-
քի բաշխման աշխատանքների մասայական դասընթաց-
ներ՝ 8984 հոդու համար : Այդ կուրսերում նույնպես
պետք է լայնորեն ներգրավել կուտանսուհներին :

Բացի այդ, աշխանացանի ընթացքում կաղմակերպ-
վելք բոլոր դասընթացներում՝ տրակտորիստաների,
գյուղատնտեսական մեքենաների նորոգման, ագրո-
լիազորների և այլն, պետք է տեղ տալ նաև կանանց :

Անբավարար զրության մեջ և գտնվում կոլտնտե-
սուհների առաջքաշումը զյուղի, կոլտնտեսության
զեկավար աշխատանքներում : Կոլտնտվարչությունները
ժամաների արանքով են նայում այդ խնդրին : Յերբեմն
նույնիսկ իրենք են դեմ լինում կուտանսուհնուն այս կամ
այն աշխատանքներում առաջ քաշելուն, նախորոք պու-
շակություններ անելով, վոր — «չի կարող այդ աշխա-
տանքը տանել», կամ «պրավալի կնիքարկի» և այլն :
Դեռ ամուր են նստած մեջ կանանց աշխատանքի
ունակությունը, ուժը թերագնահատելու տենդենց-
ները :

Պետք է վճռական պայքար մղել նման անթույլատ-
րելի արամազդրությունների դեմ : Խորհրդային իշխա-
նության 13 տարիա պատմությունն ապացուցեց,
վոր աշխատավոր կինը տղամարդու հետ համահավա-
սար, նրա կողքին հաջողությամբ պայքարում է ոռցիո-
ւիթի կառուցման համար :

Զգեսք է վախճանակ, պետք է համարձակ առաջ ըս-

շել ակտիվ, նվիրված, հարվածային կոլտնտեսուհնե-
րին և գեղջկուհներին զյուղի, կոլտնտեսության զե-
կավար աշխատանքներում : Պետք եղեկավարել նրանց
աշխատանքները, սովորեցնել ինչպես աշխատել, ուղ-
ղություն տալ նրանց—այն ժամանակ մենք կտեսնենք,
վոր նրանք իրոք վոր արդարացնում են իրենց վրա գր-
ված պարտականությունները :

Ընկ. Լենինը ասել եւ— «Ամեն մի խոհարարությ
պետք ել կարգանա յերկիր կառավարել» :

ՀԱՐՎԱՆԴԵՆԻ ԿՈՒՂԱԿ-ԴԱՇՆԱԿ ՏԱՐՐԵՐԻՆ
ՅԵՎ. ՆՐԱՆՑ ԱԳԵՆՏՆԵՐԻ ԱԶ ՅԵՎ. «ԶԱԼԵ»
ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ

Այս տարի աշխանացանի կամպանիան անցնելու յի
գոտակարգային պայքարի ավելի սրված պայմաննե-
րում : Ինչպես միշտ, այսպես ել այժմ, աշխանացանի
ընթացքում գասակարգային թշնամին՝ կուլակ-դաշնակ
տարրերը կաշխատեն զանալան զավերի և պրոկա-
ցիաների միջոցով խանդարել, վիժեցնել աշխանացանի
աշխատանքները :

Պետք է կուտանսուհները միշտ հիշեն այդ բանը—
աշխատը լինեն, հետևին զասակարգային թշնամու ա-
մեն մի քայլին, յերևան հանեն նրա ամեն մի դավը,
պայքարեն նրա դեմ :

Բացի գասակարգային թշնամուց, աշխանացանի
աշխատանքներին կխանդարեն նաև մեր կուտակցության
ներսում գտնվող աջ և «ձախ» ոպորտունիստները, վո-
րոնք ճեռնթափ են լինում, վախճանում են մեր վերելքի
գժվարություններից, աշխատում են կուսակցությանը
հետ պահել զյուղի սոց. վերակառուցման արագ թ-
փեց —վորով և ջուր են լեցնում կուլակի ջրադաշին :

32054

Մեր կուսակցությունը դիտե համառությամբ պայքարել և հաղթանակել —այդ մեզ սովորեցրել ե ընկենինը:

Հաջողությամբ ավարտելուց հետո բայց նվիրական յերկրորդ գարնանացանը և բերքահավաքը, մենք եւ ավելի հաջողությամբ կավարտենք աշխատանքները:

Աշխատավոր ժամաներին, նրանց թվում աշխատավոր կանանց մասսաներին համախմբելով կուսակցության չուրջը, նրանց պայքարի հանելով դասակարգային թշնամուներ և նրա ագենտներ՝ աջ ոպորտունիզմի, վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգի, «ձախ» խռառումների և դեսպի այդ թեքումները հայտաբերելված հաշովողականության դեմ, պայքարենք աշխանացանի հաջող ավարտման համար, ստեղծենք բոլոր անհրաժեշտ պայմանները՝ անցնելու համատարած կուեկտիվացման և զրահիման վրա կուլակության վորպես դասակարգ վերացնելուն:

Կոլտնեսուիհիներ, խորհունտեսուիհիներ, չքավոր ու միջակ գեղջկուիհիներ, կրկնապատկեք ձեր յեռանդք, բայց նվիրակորեն լծվեք աշխանացանի ուսուառութեաններին:

«Ազգային գրադարան



ԳԻՆԸ 8 ԿՈՊ. (1 մ.)

NL0203605

Արուկ Չոլախյան

Крестьянка, борись за социалистическое
переустройство деревни

Գլ. համար 6857



Տեղայ 4000